ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԻ ԴՈՒՐՍ ԲԵՐՈՒՄՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻՑ, ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 1920 ԹՎԱԿԱՆԻ ՍԿԶԲԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Մեծ Բրիտանիան նախատեսում էր զինուժով զբաղեցնել ռազմավարական և տնտեսական նշանակություն ունեցող Անդրկովկասը: Նրան հետաքրքրում էին նավթային շահերը և առաջնային խնդիր էր համարվում բոլշևիզմի դեմ պայքարը: Ծրագրվում էր Անդրկովկասի հանրապետություններից ստեղծել պատվար՝ բոլշևիզմը կանխելու համար:

Ժամանակավոր հաջողություններից հետո, բրիտանական կողմը ձգտում էր այդ խնդիրներն իրականացնել տեղի ուժերի միջոցով, քանզի Մեծ Բրիտանիայի ներքաղաքական վիճակը սրվում էր, իսկ գաղութներում ուժեղանում էր ազգային ազատագրական պայքարը: Այս լույսի ներքո աստիճանաբար թուլանում էին բրիտանական շահախնդրությունները Անդրկովկասի նկատմամբ և 1919 թ. երկրորդ կեսին բրիտանական զորքերի դուրս բերումը Կովկասից անվիճելի էր դառնում: Միջազգային քաղաքական իրավիճակի լարվածությունը և Թուրքիայի տարածքներում ազգայնական շարժումների ուժեղացումը անհանգստացնում էր բրիտանական ղեկավարներին, որոնք վճռում են ռիսկի չդիմել և 1919թ. օգոստոսի 15-ից Կովկասից դուրս բերել իրենց զինուժը: Դաշնակիցները գիտակցում էին, որ Թուրքիայի տարածքներում ծավալված շարժումները հանգեցնելու էին տեղի ազգային փոքրամասնությունների կոտորածներին:[1] Այդուհանդերձ բրիտանացիները խիստ անհրաժեշտություն էին համարում իրենց զորքերի հեռացումը: Նրանք հստակ պատկերացնում էին, թե բրիտանական զորքերի դուրսբերմամբ ինչպիսի ողբերգական վիճակի մեջ է հայտնվելու Հայաստանը: Քայքայված տնտեսությամբ, հաղորդակցության ճանապարհների բացակայությամբ, կես միլիոնից ավելի սովյալ գաղթականներով Հայաստանն ի վիճակի չէր լինի դիմակայել իր տարածքները շրջափակած թշնամիներին:[2]

---

[1] Տես Ա. Նասիպեան, Բրիտանիա և Հայկական Հարցը 1915-1923թթ, ՀԲԸՄ Վ. Ապտալեան մծակութային հիմնադրամ,1994 էջ 172-173

[2]Տես Ջ. Կիրակոսյան, Հայաստանը Միջազգային Դիավանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 577; Documents on British Foreign Policy 1919-1939, v. 2, London, 1919, p. 322

Ճիշտ է, բրիտանական զորքերը 1919 թ. օգոստոսի 15-ից դուրս բերվեցին Անդրկովկասից, սակայն նրանք պահպանեցին իրենց դիվանագիտական և զինվորական ներկայացուցչությունները: Նրանց առաջնային խնդիրն էր՝ ճանաչել Անդրկովկասի հանրապետությունները: Տարածաշրջանում այդ էին պահանջում բրիտանական շահերը, ուստի 3 հանրապետությունների ճանաչման խնդրի վերաբերյալ Ուորդրոպը բազմաթիվ հեռագրեր էր ուղարկում իր կառավարությանը:

1919թ. հուլիսի 5-ին ԱՄՆ-ի ներկայացուցիչ Վ. Հասկելի գալուստն Անդրկովկաս պայմանավորված էր այդ երկրի շահերով և մանդատային խնդիրներով: Ամերիկյան կողմը ուսումնասիրում էր Անդրկովկասը, Թուրքիան և նեղուցները: Հատկանշական է, որ մանդատի հարցում ավելի շատ շահագրգռված էր ԱՄՆ-ի նախագահ Վ.Վիլսոնը, ում նախաձեռնությամբ օգոստոս ամսին կազմակերպվում է »Ամերիկյան ռազմական միսիա«: Այն գլխավորում էր Ջեյմս Հարբորդը, որը 1919թ. աշնանը շրջագայեց մանդատային տարածքներով և 1920 թ. ապրիլին համապատասխան զեկուցագիր ներկայացրեց կոնգրեսին:

Մինչև մանդատային հարցերի ճշգրտումը՝ տարածաշրջանում տեղի էին ունենում մի շարք անդառնալի գործընթացներ: Այն ժամանակ, երբ Դաշնակիցները համաձայնության չէին գալիս, թե ով կարող է օգնել հայերին, ուժեղանում էր թուրքական ճնշումն Արևմտյան Հայաստանում: Կովկասում հեղինակությունը փրկելու համար 1920թ. հունվարի 10-ին Դաշնակիցների խորհուրդը երկար վիճաբանություններից հետո որոշեց քայլեր կատարել Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների ճանաչման ուղղությամբ: Մինչ Հայաստանի անկախության ճանաչումը կապվում էր Թուրքիայի հետ ստորագրվելիք հաշտությամբ Դաշնակիցների օգնության հետ հույսեր կապող Հայաստանն հայտնվել էր ողբերգական դրության մեջ: Բացի թուրք-ադրբեջանական պայմանագրից, որն ուղղված էր Հայաստանի դեմ (1919թ. նոյեմբերի 29 Կ.Պոլիս) համապատասխան գաղտնի պայմանագիր ստորագրվեց Վրաստանի և Ադրբեջանի միջև ևս: Հաշվի առնելով Հայաստանի և կամավորական բանակի հրամանատարության բարեկամական հարաբերությունները և վերջինիս կողմից Վրաստանի և Ադրբեջանի նկատմամբ հարձակման սպառնալիքը, այս երկու պետությունները իրենց ռազմական փոխօգնության պայմանագրում արձանագրում են, թե. »քանի որ Հայաստանը չի միանում վրաց-ադրբեջանական փոխադարձ օգնության պայմանագրին՝ ռազմական փոխօգնության ոլորտում, չի բացառվում, որ Հայաստանը միանա կամավորական բանակին՝ Ադրբեջանի և Վրաստանի վրա հարձակման դեպքում«[1]: Սա առավել ևս հասկանալի էր

[1] А. Раевский, Английская Интервенция и Мусаватское Правительство, Баку, 1927, стр. 108:

դառնում Ադրբեջանի պաշտպանության նախարար Մեհմանդարովի Պաշտպանության կոմիտեին գրված նամակում, որտեղ փաստվում էր, որ Վրաստանի հետ իրենց ռազմական դաշնագիրը ամրացրեց իրենց ռազմաճակատը Դաղստանի և Հայաստանի սահմանի պաշտպանությունում[1]:

Հայաստանը հայտվել էր մեկուսացման մեջ, և դյուրանում էր հայկական տարածքներին տիրանալու ադրբեջանական ծրագրերի իրականացումը: Ադրբեջանը փորձում էր օգտագործել բարենպաստ իրադրությունը և արագացնել Զանգեզուրի գրավումը, Ղարաբաղի հայության հնազանդեցումն ու ոչնչացումը: 1919 թ սեպտեմբերի 29-ի իր նամակում այդ հանգամանքը արձանագրում էր Ն.Նարիմանովը: »Հայկական բնակչությամբ գավառներում տեղի են ունենում կոտորածներ (Ղարաբաղի և Ղազախի),-գրում է նա:-Կան բնակավայրեր՝ հայկական, մահմեդական և ռուսական, որոնք հրաժարվում են ճանաչել Ադրբեջանի իշխանությունը և ցանկանում են միանալ Ռուսաստանին: Հայաստանում բախումները մահմեդականների հետ ընդունել են պատերազմի բնույթ: Մահմեդականներին ղեկավարում են թուրքական սպաները (Խալիլ Բեյ և այլոք)«[2]:

Բրիտանացիների կողմից Ղարաբաղի, Զանգեզուրի, Կարյագինոյի, Ղազախի, Ջեբրայիլի նահանգապետ նշանակված նախկին թուրքական գործակալ Սուլթանովը 1919 թ վերջին Ղարաբաղը պատել էր լրտեսական ցանցով: Հայերի սպանությունները դարձել էին ամենօրյա երևույթ: Ղարաբաղի խնդիրը դառնում էր հրատապ: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստանում էր հավաստի տեղեկություններ, որ ռազմական ոտնձգությունները հայկական Ղարաբաղի դեմ ղեկավարում էին թուրքական հրամանատարները և Ադրբեջանի բանակի ղեկավարությունը: 1919թ-ի սկզբին Ղարաբաղ ժամանած Նուրի փաշան հավաքում է թուրքական սպաներին գեներալ Նովրուզովի գլխավորությամբ՝ Ղարաբաղը և Զանգեզուրը գրավելու համար: Հայաստանի Հանրապետությունը 1919թ - վերջին միայն կարողացավ լուրջ ուշադրություն բևեռել Զանգեզուրի և Ղարաբաղի խնդիրներին: Նախ՝ Զանգեզուրում ստեղծվում է »Վարիչների խորհուրդ«, որն իր ձեռքում է կենտրոնացնում քաղաքական իշխանությունը: Զինվորական տեսակետից շրջանը բաժանվում էր երեք մասի՝ համապատասխանաբար Պ. Տեր-Դավթյանի, Գ. Նժդեհի, Ն.Ղազարյանի հրամանատարությամբ:

Ադրբեջանական կառավարությունը, Զանեզուրի դեմ պայքարելու համար փորձում էր զորքեր տեղափոխել Ղարաբաղի տարածքներ:

[1] Նույն տեղում:
[2] Борьба За Победу Советской Власти в Азербайджане 1918-1920, Документы и материалы, Баку, 1967, стр. 291-292:

քով: Կոտորելով Շարուրի և Նախիջևանի հայ բնակիչներին՝ 1920 հունվարին ադրբեջանական զորքերը շարժվում են Զանգեզուրի դեմ: Վերոնշյալ տեղաշարժներին տեղյակ էին դաշնակիցները, որոնք բազում քննարկումներից հետո ոչինչ չձեռնարկեցին թուրք-թաթարական հարձակումները կանխելու համար[1]: 1920թ հունվարին Փարիզում տեղի ունեցած դաշնակիցների խորհրդի նիստում Ու.Չերչիլը նշում էր, որ Հայաստանը հարավից ենթարկվում է թուրքական հարձակումների: Հայաստանի Հանրապետության բողոքները կրկին մնում են անպատասխան: Այս անգամ հանրապետությունը ստիպված էր քայլեր ձեռնարկել Ղարաբաղը, ինչպես նաև Հայաստանը, թուրք-թաթարական շրջապատումից փրկելու համար: Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարությամբ Դրոն կազմակերպել էր հետախուզական գործողություններ և ձեռնարկել ռազմական նախապատրաստություններ: Նա Զանգեզուրի պաշտպանության հրամանատարների հետ 1919թ վերջին և 1920թ սկզբին մի՝հմեդականներից մաքրում է Զանգեզուրի և Ղարաբաղի միջև ընկած տարածքները: Հունվար ամսին այդ գործողությունները տալիս են սպասված արդյունք: Դրոն Ղարաբաղի պաշտպաններին առաջարկում է Ադրբեջանի կողմից հարձակման դեպքում անմիջապես տեղեկացնել իրեն[2]: 1920 հունվարի 22-ին Սուլթանովը հատուկ գործուղմամբ ժամանում է Ղարաբաղ՝ Վարանդա և Զանգելան, զորքերն այդ տարածքները մտցնելը նախապատրաստելու նպատակով: Սուլթանովը Զանգեզուրի նկատմամբ բացահայտ նկրտումներ դրսևորեց: Կրկին փորձ կատարվեց զինաթափել Ղարաբաղի հայությանը՝ Զանգեզուրի վրա հարձակման դեպքում սեփական թիկունքն ապահովելու համար: Հունվարի 30-ին Անդրկովկասում բրիտանական ներկայացուցիչ Ուորդրոպին հղված ադրբեջանական ոտնձգություններին միջամտելու Հայաստանի Հանրապետության դիմումը ոչ մի արդյունք չի տալիս: 1920թ հունվարին քայլեր են ձեռնարկվում Ղարաբաղի պաշտպանունակությունը ուժեղացնելու ուղղությամբ: 1919թ վերջին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Զրաբերդ ու Խաչեն ուղարկված արցախցի մի խումբ գործիչներ Ա. Միքայելյանի ու Զ.Մեսյանի գլխավորությամբ կազմավորում են Արցախի ինքնապաշտպանության մարմին: Ստեղծված իրադրությունը պահանջում էր արցախահայության նոր համագումարի հրավիրում: Նախնական պայմանավորվածության համաձայն ութերորդ համագումարը պետք է տեղի ունենար փետրվարի 28-ին 168 պատվիրակների կազմով[3]: Սակայն, հունվարին կայացած այդ որոշման իրականացմանը խոչընդոտում էր Սուլթանովը՝ պահանջելով համագումարը հրավիրել Շուշիում:

Փետրվարի սկզբին Շուշի ժամանած Խալիլ և Նուրի փաշաները ծրագրում են թուրք-թաթարական հարձակումը: »Թուրքական զորքեր են կենտրոնացվում Կարյագինոյում և Զանգեզուրին հարակից այլ շրջաններում: Փաստ է դառնում, որ ծրագրվում է թուրք-թաթարական դավադրություն Ղարաբաղի և ողջ Հայաստանի դեմ«[1]-, գրում էր Հառաջը: Թուրք-թաթարները ձգտում են հայերի դեմ օգտագործել տեղի և այլ բնակավայրերի քրդական ու մահմեդական ուժերին: Այդ մասին բազմաթիվ տեղեկություններ են հասնում Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

1920թ. փետրվարի 28-ին Ղարաբաղի Ազգային խորհուրդը հրավիրում է 8-րդ համագումարը: Սուլթանովի ճնշման և սպառնալիքների պայմաններում հնարավոր չի լինում ապահովել համագումարի անդամների ամբողջական ներկայությունը Շոշ գյուղում: 8-րդ համագումարի պատգամավորների մի մասը հավաքվում է Շուշիում (50 ներկայացուցիչ), իսկ մյուս մասը՝ Շոշում (77 ներկայացուցիչ): Պատգամավորների թվի մասին կան մի շարք այլ տեղեկություններ[2]: 1920 փետրվարի 28-ից մարտի 4-ը կայացավ Ղարաբաղի հայության 8-րդ համագումարը, որը քննության առավ Ադրբեջանի կառավարության հետ 7-րդ համագումարի կողմից կայացրած ժամանակավոր համաձայնագրի հարցը: Համագումարն արձանագրեց, թե փետրվարի 19-ի Սուլթանովի հայտարարությունն առ այն, իբր խաղաղության վեհաժողովը չի կայանալու, և հայությունը պետք է ենթարկվի Ադրբեջանին, 1919 թ օգոստոսի 22-ի Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհրդի և Ադրբեջանի կառավարության միջև համաձայնագրի կոպիտ խախտում է: Ադրբեջանական կողմից կատարվել էին մի շարք խախտումներ ևս. ըստ համաձայնագրի 16-րդ կետի՝ Ղարաբաղի տարածքով չպետք է կատարվեր զորքերի տեղաշարժ, իսկ դրա անհրաժեշտության դեպքում պետք է ստացվեր հատուկ համաձայնություն: Սակայն ադրբեջանական կողմը 1919թ հոկտեմբերին իր 12.000-անոց զորքը Ասկերանի, Խանքենդի, Շուշիի տարածքով տեղափոխում է Զանգեզուր: Այսպիսով, Ղարաբաղի հայերի 8-րդ - համագումարը, հաշվի առնելով Ադրբեջանի կողմից համաձայնագրի խախտման փաստը, քաղաքական վիճակի վերաբերյալ ընդունում է բանաձև, ուր վկայվում էր հավատարիմ լինելը համաձայնագրի կետերին և կոչ էին անում Ադրբեջանին չխախտել դրանք: Հակառակ դեպքում Ղարաբաղի հայությունը կդիմի պաշտպանության՝ համա-

[1] Տես Times, 19 March, Documents on British Foreign Policy 1919-1939, vol. 2, p. 923
[2] Տես Համլետ Գևորգյան, Դրո, Կենսագրական Հուշեր, Վկայություններ, Երևան, 1991թ., էջ 142:
[3] Բ. Ուլուբաբյան, Արցախյան Գոյապայքարը, Երևան, ԳիրԳրոց , 1994, Ա, էջ 79:

[1] Յառաջ, 26 փետրվարի,1920թ.:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ.20; Հ.Ս. Հարությունյան, Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1996, էջ 206:

պատասխան միջոցների կիրառմամբ: Դիմումներ էր ուղարկվում դաշնակից երկրների հրամանատարությանը[1]: Նույն ժամանակ Շուշիի համագումարը վճռում է Ադրբեջանին ենթարկվելու որոշում ընդունել: Ադրբեջանական կողմը, զայրացած 8-րդ համագումարի որոշումներից, սկսում է ծեռնարկել Ղարաբաղի վերջնական հնազանդեցման իր քայլերը: 1920թ մարտի 20-ին Սուլթանովը վերջնագիր էր ներկայացրել Ղարաբաղի ազգաբնակչությանը զինաթափվելու պահանջով, հակառակ դեպքում, սպառնալով՝ դիմել բռնի ուժի:

Այդ ընթացքում Ղարաբաղ են վերադառնում անգլիացիների պնդմամբ արտաքսված հայ մի քանի գործիչներ: Լարվածությունը Ղարաբաղի բնակչության շրջանում մեծանում է՝ կապված այն տեղեկությունների հետ, թե ադրբեջանական կողմը »Նովրուզ Բայրամի օրը«՝ մարտի 23-ին, սկսելու է համատարած հարձակում Ղարաբաղի և Զանգեզուրի վրա, և որ Անդրկովկաս են ներխուժելու բոլշևիկները: Ադրբեջանական կողմը Ղարաբաղի վրա հարձակումը սկսում է մարտի 22-ին, այն ժամանակ, երբ Սուլթանովն սկսել էր հայերի բռնի զինաթափումը և հարձակումը Շուշիի հայկական թաղամասի վրա: Հետ մղելով հակառակորդի հարձակումները՝ հայերը սկսում են Ղարաբաղից ադրբեջանական զորքերի վտարման գործողությունները: Մարտի 22-ի լույս 23-ի գիշերը հայկական ուժերը գրոհում են Խանքենդի և Ասկերանի ուղղությամբ: Գրեթե առանց որևէ դիմադրության հանդիպելու՝ հաջողվում է գրավել Ասկերանը: Ադրբեջանական կողմը հայերի վրա նոր հարձակումը է նախապատրաստում Աղդամի և Ասկերանի ուղղություններով: 1500 մահմեդական զինվորներին օգնելու էին հսկայական թվով բաշիբոզուկներ: Ադրբեջանական կողմի բռնաճնշումները հանգեցրել էին հայերի պարտիզանական բուռն ելույթների և զավթիչ զորքերի ջախջախմանը Խանքենդում, Ասկերանում, Խոջալուում և Ղարաբաղի ու Զանգեզուրի այլ վայրերում[2] :

Վերոնշյալ իրադարձությունների շուրջ դաշնակիցների ներկայացուցիչները (Հասկել, Ուորդրոպ, Նոնանկոպ, Գաբբա) Հայաստանի Հանրապետության կառավարությունից ստանում են համապատասխան դիմումներ, որտեղ ներկայացվում էր թուրք սպաների նախաձեռնությամբ ադրբեջանական հարձակումը: Սակայն դաշնակից ներկայացուցիչները իրատեսական ոչինչ չէին կարող ձեռնարկել, քանզի այլևս տեր չէին իրադրությանը: Ասկերանի կորուստը թուրք-մահմեդական ուժերին ստիպում է մարտի վերջին կազմակերպել վճռական արշավանք: Սուլթանովը, նախատեսվածի համաձայն,

[1] Տես Աշխատավոր, 1920թ, 13 ապրիլի; Խորհրդային Ղարաբաղ, 1989թ, 11 նոյեմբերի;Հ. Թումյան, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920թթ.:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 45, թ. 1; Азербайджан, 28 марта, 1920, номер 167; ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 136:

մարտի 22-ին՝ Նովրուզ Բայրամը նշելու պատրվակով զորքը Խանքենդից տեղափոխում է Շուշի: Մուտք գործելով Շուշի՝ մահմեդական ուժերը ներխուժում են հայ ընտանիքներ և պահանջում հանձնել զենքերը: Բռնությունների արդյունքում թուրք սպայի սպանությունը դառնում է հայերին կոտորածի ենթարկելու հրամանի պատրվակ: Սուլթանովը պատճառաբանում էր, թե իբր Շուշի են մտել զինված հայեր: Ունենալով քանակական և զինուժի հսկայական գերակշռություն (մարտի 11-12-ին Բաքվից Ղարաբաղ և Զանգեզուր էր ուղարկվել 90 վագոն զինամթերք)՝ մահմեդական զորքը և խուժանը մի ամբողջ օր՝ մարտի 23-ին, սպանդի են ենթարկում Շուշիի հայ բնակչությանը[1]: Դա յուրօրինակ պատասխան էր հայերի կողմից Ասկերանի գրավմանը: Կոտորածին զոհ է գնում մոտ 8.000 հայ: Հիմնահատակ ավերվում են հայերի բնակավայրերը, իսկ ունեցվածքը թալանվում է: Կոտորածների ծրագիրը հետագայում շարունակվում է Ելիզավետպոլի գավառի Կարաչինար, Պարիս, Մանազբեկ, Վերին և Ներքին Աղջալա, Էրքեջ, Աբլախ, Ղարադաղլու, Արմավիր, Սուլուկ, Գետաշեն բնակավայրերում: Ոչնչացվում են Նուխու և Արեշի գավառների 36 գյուղերի մոտ 49.000 հայ բնակիչ[2]: Այսպիսով, կոտորածի արդյունքում ոչնչացվում է հնամենի հայաբնակ Շուշի քաղաքի հայ բնակչությունը:

Ադրբեջանական զորքերը մարտի 30-31-ին սկսում են հարձակումները Ասկերան-Շուշի, Աղդամ-Խաչեն, Կարաչինար-Էրքեջ (Գյուլիստան) ուղղություններով: Խանքենդի կողմից մի առանձին զորակազմ է հարձակվում Գորիսի վրա, իսկ Զեբրայիլի կողմից՝ Կապանի վրա:

Ապրիլի սկզբին՝ կոտորածներին ու ջարդերին զուգահեռ, թուրք-մուսավաթական զորքերը հարձակվում են Ասկերանի վրա: Ունենալով հսկայական առավելություն (15-ը 1-ի դեմ), այդուհանդերձ նրանք հանդիպում են հայերի հերոսական ու համառ դիմադրությանը և հետ են շպրտվում: Խայտառակ պարտությունների հետևանքով ադրբեջանական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Սելիմովը պաշտոնանկ է արվում և նրա փոխարեն նշանակվում է Խալիլ փաշան:

Տեղեկանալով, որ Ղարաբաղում սկսվել է լայնածավալ հարձակում, ՀՀ կա-ռավարությունը որոշում է ռազմական օգնություն ուղարկել. »Գորիս-Ավդալար-Շուշի գծով Ղարաբաղ մեկնեց Դրաստամատ Կանայանի գլխավորած Զանգեզուր-Ղարաբաղի էքսպեդիցիոն ջոկատը, իսկ Կապանի ուժերի մի մասից կազմված և »Հարավդարաբաղյան« անվանումը ստացած ջոկատը Նժդեհի հրամանատա-

[1] Տես Нагорный Карабах, В.А. Микаслян, Сборник док. и материалов, 1992, стр. 416:
[2] Տես Լեռնային Ղարաբաղ, 1989, 11 նոյեմբերի; Հ. Թումյան, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում; ՀԱԱ, ֆ. 245, ց. 1, գ. 14, թթ. 75-77; Слово, 16 апреля, 1920г.:

ությամբ մտավ Դիզակ«[1]: Մինչ Հայաստանից օգնության ժամանումը՝ թշնամական ուժերին ապրիլի 3-ին հաջողվում է ճեղքել պաշտպանական գիծը և գրավել Ասկերանը: Պաշտպանության հրամանատար Դալի Ղազարը հրամայում է նահանջել, որպեսզի հնարավորինս կրճատի զոհերի թիվը: Հարկ է նշել, որ տրված հրամանից հետո հրամանատարն ինքը մնում է դիրքերում և զոհվում:

Ասկերանին տիրելու արդյունքում թշնամուն հաջողվեց Ղարաբաղը բաժանել երկու մասի: Հակառակորդը տիրեց Աղդամ-Շուշի կարևորագույն ճանապարհին:

Ասկերանը գրավելուց հետո՝ ապրիլի 6-ին, ադրբեջանական զորքերը շարժվում են դեպի Ջևանշիր՝ ավերելով ճանապարհին ընկած հայկական գյուղերը: Սպանվում են նաև Շուշիի կոտորածից փրկված և բանտերում մնացած մի քանի հարյուր հայեր[2]:

Ադրբեջանական կանոնավոր զորքերի թիվն այս գործողությունների ընթացքում հասնում է 10.000-ի: Հսկայական թիվ էին կազմում նաև մաէմեդական խաժամուժն ու անկանոն թալանչիական ջոկատները: Դրանք տեղաբաշխված էին Ղարաբաղի տարբեր հատվածներում և Ջանգեզուրի շրջակայքում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը բազմաթիվ դիմում-նամակներով դաշնակիցներից պահանջում էր Ադրբեջանի զորքերը հեռացնել Ղարաբաղի տարածքից, թուրք սպաներին ստիպել հետ քաշվել, դադարեցնել հայերի կոտորածները[3]: Իրավիճակի ուսումնասիրության համար ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որը կազմված էր Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներից: Այն պետք է ժամաներ Ղարաբաղ, փորձեր դադարեցնել առճակատումը: Դաշնակից երկրների ներկայացուցիչները տիրող վիճակի մասին դիմումներ են ուղարկում իրենց կառավարություններին[4]:

Հատկանշական է, որ բրիտանացիների պահանջները ուղղված Ադրբեջանի կառավարությանը, մերժվում են, և ըստ »Թայմսի«. »Ադրբեջանի կառավարությունը մերժել է Անգլիայի կողմից արված պահանջը՝ հանձնել թուրք ազգայնական գործիչներ Նուրի և Խալիլ փաշաներին«[5]: Ադրբեջանական կառավարությունը ոչ միայն չէր հանձնում թուրք սպաներին, այլև 1919թ հունվարին Բաքվում կայացած »Մուսավաթ« կուսակցության ժողովում, որին ներկա էին Խալիլը և Նուրին, կուսակցության նախագահ Կարաբեկ Կարաբեկովը,

[1] Ա. Սիմոնյան, Ջանգեզուրի Գոյամարտը 1920-1921թթ., ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2000:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 144:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 175:
[4] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 54:
[5] Նոր Աշխատավոր, 6 ապրիլի, 1920թ., էջ 2:

Ադրբեջանի հարուստներից պահանջում էր տալ 1 մլրդ ռուբլի, որով վերոնշյալ փաշաների գլխավորությամբ պետք է ստեղծվեր 200.000-անոց բանակ: Վերջիններիս խորհրդով որոշվում էր Մուստաֆա Քեմալին հրավիրել Բաքու և բանակի ստեղծման նպատակով կազմակերպել կադրերի ընտրություն: Այս մասին հաղորդում է ՀՀ գլխավոր շտաբի գնդապետ, հետախուզության բաժնի պետ Դևոյանցը[1]:

Ապրիլի 7-ին հակառակորդը գերազանց ուժերի շնորհիվ գրավում է Խանքենդը և շարժվում Կարյագինո: Այստեղ, մի շարք գյուղեր գրավելուց հետո, նրանց առաջխաղացումը կանգնեցվում է: Ադրբեջանական կողմի և Ղարաբաղի կամավորների միջև թեժ մարտեր են տեղի ունենում ապրիլի 5-13-ի ընթացքում:

1920թ ապրիլի 9-ին կայացավ Անդրկովկասի հանրապետությունների կոն-ֆերանսը, որտեղ հայ-վրացական կողմը պահանջեց քննարկել Ղարաբաղում և Ջանգեզուրում ռազմական գործողությունների հարցը: Կոնֆերանսը կազմեց հանձնաժողով, որը պետք է մեկներ Ղարաբաղ և իրականացներ ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ կայացված որոշումը: Հանձնաժողովի գործունեությունը ադրբեջանական կողմի հարուցած խոչընդոտների պատճառով արդյունք չտվեց: Կոնֆերանսին իրենց դիմումներն են ուղարկում Ղարաբաղի հայության գյուղացիական համագումարները, որոնք իրենց նիստերում Հայաստանին միանալու վերաբերյալ որոշումներ էին կայացրել: Որոշումներում փաստվում էին Ադրբեջանի ոտնձգությունները և հայ բնակչության կոտորածները[2]: Այս ընթացքում շարունակվում էին ռազմական գործողությունները Սղնախում և այլ վայրերում, սակայն հայկական բանակի՝ Ղարաբաղին օգնության գալու լուրը ադրբեջանական զինուժին ստիպում է լքել դիրքերը, որը ստիպված էր իրենց ողջ զինված ուժերը պահել Ղարաբաղի սահմանների վրա: Ադրբեջանի բանակի մեծ մասը կենտրոնացված էր Ղարաբաղի ուղղությամբ, որն էլ հանգեցնում է բոլշևիկների հարձակումների անպատրաստ լինելուն: Դա վկայում էր Ադրբեջանի կառավարության պարագլուխ Խան Խոյսկին. »Մեր պետության համար ստեղծվել է մի շատ տագնապալի մոմենտ, այս վայրկյանին մենք մեր բոլոր զորքերն ուղարկել ենք Ղարաբաղ և ծեռներս ծալած նստել: Ղարաբաղի անցքերը սոսկալի դաշույնի հարված էին մեր այսպիսի ծանր կացության ժամանակ«[3]: Ապրիլի վերջին երկրամասի համար բախտորոշ իրադարձություն տեղի ունեցավ. խորհրդային զորքերը ամսի 28-ին մտան Բաքու և գրեթե առանց կրակոցի՝ գրավեցին իշխանությունը: Սուլթանովն արագորեն կողմնորոշվում է դե-

[1] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թթ. 180-181:
[2] Տես Հ.Ա.Ա., ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 191:
[3] Խորհրդային Ղարաբաղ, 11 նոյեմբերի, 1989թ:

պի բոլշևիկները և »Շուշում ռևկոմ կազմակերպելուց հետո առաջարկում է ղարաբաղցիներին դադարեցնել կռիվները«[1]:

Դրոյի զորքերն ապրիլի 14-ին մտնում են Ղարաբաղ: Նա դիմում է Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը հատուկ հայտարարությամբ, որտեղ վկայակոչելով Ղարաբաղի ժողովրդի հերոսական անցյալը՝ կոչ է անում միասնաբար պայքարել ընդհանուր թշնամու դեմ[2]:

1920թ. ապրիլի 18-ին Ներքին Թաղավարդ գյուղում բացվում է Դիզակի և Վարանդայի հայ ազգաբնակչության ներկայացուցիչների ժողովը, որին մասնակցում է նաև Դրոն: Որոշում է կայացվում ստեղծել ժամանակավոր կառավարություն, իսկ բանակի ընդհանուր հրամանատար է ճանաչվում Դրոն: Կառավարության առաջին նիստը գումարվեց 1920թ. ապրիլի 23-ին: Վերոնշյալ նիստը որոշում կայացրեց պնդել Ղարաբաղը Հայաստանի անբաժան մաս ճանաչելու տեսակետը:

Իր հերթին Նժդեհը Կապանի իր զորամասով տեղակայվում է Դիզակի շրջանում:

Դրոյի հրամանով Վարանդայում և Դիզակում նախապատրաստվում էր անցկացնել զորահավաք՝ 21-25 տարեկան երիտասարդությունից: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ զորահավաքն իրականացվել է 23-35 տարեկանների շրջանում[3]: Այսպիսով, ժամանակավոր կառավարությունն իր լիազորություններն էր տարածում ողջ Ղարաբաղում: Ղարաբաղի հայության կյանքում նշանակալից էր 9-րդ համագումարի հրավիրումը 1920թ. ապրիլի 25-29: Համագումարի կայացրած որոշումներից առանձնահատուկ էին 7-րդ համագումարի՝ Ադրբեջանի հետ կայացրած ժամանակավոր համաձայնագրի չեղյալ հայտարարումը և Հայաստանի հետ միավորման հռչակումը[4]: Ադրբեջանական նոր հաստատված խորհրդային իշխանությունն ի սկզբանե ծրագրել էր տիրանալ առաջին հերթին Ղարաբաղին, ապա՝ Զանգեզուրին և Նախիջևանին: Դա խորհրդային իշխանության հետևողական քաղաքականությունն էր, բացի այդ՝ կայացած խորհրդա-քեմալական համաձայնության հետևանք: Ծրագրված էր, որ խորհրդային զորքերը, գրավելով Եվլախը, պետք է շարժվեն Շուշի՝ Ղարաբաղի վրայով միանալու համար Թուրքիային[5]: Հայաստանի կողմից դիմադրություն ցուցաբերելու դեպքում նախատեսվում էր պատերազմ սկսել: Ապրիլի 30-ին Ադրբեջանի Խորհրդային Հանրապետությունը ՀՀ կառավարությանը վերջնագիր ներկայացրեց, որի առաջին կետով պահանջվում էր Ղարաբաղը և Զանգեզուրը մաքրել

[1] Նույն տեղում:
[2] Տես Ա.Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը 1920-21թթ., էջ 43-44:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 36, թ. 2:
[4] Տես Հ.Հարությունյան, Լեռնային Ղարաբաղը 1918-21 թթ., էջ 233-234:
[5] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 82, թթ. 1-3:

հայկական զորքերից: Վերջնագրին պատասխանելու համար տրվում էր եռօրյա ժամկետ:

Վերջնագրի մասին տեղյակ էին նաև բրիտանական և դաշնակից ուժերի հրամանատարությունը,ինչպես նաև՝ Ֆորին Օֆիսի անձնակազմը: Հատուկ գրությամբ այդ մասին նրանց տեղյակ էին պահել բրիտանական ներկայացուցիչը Կ.Պոլսում և Համո Օհանջանյանը[1]: Սակայն դաշնակից ներկայացուցիչները և ղեկավարությունը հայերին պաշտպանելու ուղղությամբ ոչինչ չեն ձեռնարկում:

Վերջնագրին որպես պատասխան՝ ՀՀ արտգործնախարար Օհանջանյանը հեռագիր է ուղարկում Կովկասյան ռազմաճակատի հեղափոխական խորհրդին, Ադրբեջանի հեղկոմին և այլոց, որտեղ նշվում էր, թե Հայաստանը չունի զորքեր Ադրբեջանի տարածքում, այլ ընդհակառակը՝ Ադրբեջանի մուսավաթական կառավարության զորքերն են գտնվում »վիճարկվող հայկական Ղարաբաղում«[2]:

Մայիսի 1-ին ՀՀ կառավարությանը նույնպիսի մի վերջնագիր է ուղարկվում 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունից: Որպես սպառնալիք նշվում էր. »Պահանջը չկատարելը կնկատվի որպես մարտահրավեր՝ ուղղված ՌՍՖԽՀ հասցեին: Առաջարկը կիրագործվի Ռուսաստանի Կարմիր բանակի ուժերով, իսկ հետևանքների պատասխանատվությունը հայկական կառավարության վրա«[3]:

Պարզ էր դառնում, որ դրված էր Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացման հարցը: Այս մասին վկայում էր նաև Գ.Նժդեհը:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները, որոնք հիմնականում նույն մուսավաթականներն էին, ձգտում էին խորհրդային քողի տակ հասնել իրենց վաղեմի ծրագրերի իրականացմանը: Խորհրդային հրամանատարությունն էլ իր հերթին Հայաստանի տարածքների դեմ ռազմական գործողություններն արդարացնում էր նրանով, որ «Նախիջևան-Օրդուբադ-Շուշի շրջանի զբաղեցումը նպատակ ունի դադարեցնել հայ-մահմեդական կոտորածները մինչ Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանների որոշումը»[4]: Հայաստանի կառավարությունը որոշում է ընդունում բոլոր միջոցները ձեռք առնել փրկելու հայ ժողովրդի գոյությունն ու ազատությունը: Մայիսի 7-ին ՀՀ հրամանատարության շտաբը պաշտոնական հաղորդագրությամբ հաստատեց բոլշևիկյան-քեմալական համագործակցության և նրանց կողմից ՀՀ դեմ պատերազմի պատրաստության իրողությունների մասին: Հրապարակվեց կոչ՝ ուղղված ՀՀ բանակին և պաշտոնյանե-

[1] Տես Armenia: Political and Ethnic Boundaries. London, 1998, 1878-1948, pp. 812-813:
[2] Ա.Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը 1920-21թթ., էջ 52:
[3] Նույն տեղում, էջ 53:
[4] Нагорный Карабах в 1918-1923гг, В.А. Микаелян, Сборник док. и материалов, Ереван, 1992, стр. 462:

ին: Ղարաբաղում գեներալ Դրոյի իրականացրած զորահավաքի արդյունքում հավաքագրվում է 8.000 մարդ: Ադրբեջանի ռազմածովային կոմիսարին հղված զեկույցից պարզվում է, որ խորհրդային կողմը տիրապետում էր Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների զարգացման տեղեկատվությանը: Մեկ ուրիշ զեկուցագրում Ադրբեջանի հետախուզության կողմից արձանագրվում էր, որ Հայաստանի զինված ուժերի մեծ մասը տեղակայված էր Կարս-Երևան գծով, իսկ նրանց դեմ կենտրոնացվում են թուրքական երեք դիվիզիաներ[1]: Մայիսի 19-ին խորհրդային Կարմիր բանակի մի պատվիրակություն ժամանում է Շուշի, որտեղ տեղակայված էր հայկական զորքերի շտաբը: Պատվիրակությունը հավաստիացրեց Դրոյին, որ Կարմիր բանակը թույլ չի տա վնաս պատճառել հայերին: Դրոն մտավախություն ուներ, որ »Համաշխարհային հեղափոխությունը աշխարհի երեսից կարող է ջնջել հայերին«[2]: Նա Սահակ Տեր-Գաբրիելյանի և Լևանդովսկու՝ հայկական զորքերը Ղարաբաղից դուրս բերելու պահանջին պատասխանում է, որ ինքը զինվորական է և Ղարաբաղ է մտել իր կառավարության հրահանգով, ու կհեռանա միայն վերջինիս հրամանի դեպքում:

Խորհրդային և ադրբեջանական զորքերը սկսում են առաջխաղացումը և հարձակում գործում Ղարաբաղի վրա: 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը հրահանգում է մայիսի 21-ից գրավել Շուշու, Կարյագինո-Ջեբրայիլի շրջանները: Խորհրդային զորքերի կենտրոնացումը Գանձակ-Եվլախ-Շուշի գծով պետք է տեղի ունենար մինչև մայիսի 29-ը[3]: 32-րդ հրաձգային դիվիզիայի՝ Շուշի մտնելուց հետո, մայիսի 24-ին »Ավետարանոց գյուղում Դրոն իր զինակիցների խորհրդակցություն հրավիրեց, որտեղ հայտնեց, որ Հայաստանի կառավարությունը համաձայնություն է տվել զորքերը հանել Ղարաբաղից«[4]: Հայտնի է նաև, Ղարաբաղի իրադարձությունների մասին կառավարությանը հղած բազմաթիվ դիմումներն անպատասխան են մնում, և Դրոն կանգնած էր փաստի առաջ. պատերազմե՞լ - խորհրդային զորքերի դեմ, թե՞ ոչ: Մայիսի 24-ի խորհրդակցության արդյունքում որոշվում է հեռանալ Զանգեզուր: Մայիսի 23-ին խորհրդային ուժերն անդեն մտել էին Խաչեն, Ջևանշիր և Գյուլիստան, որտեղ հայտարարվել էր խորհրդային իշխանություն, իսկ Դրոն մայիսի 28-ին իր ուժերով հասնում է Գորիս[5]: Դրոյի հեռանալը Ղարաբաղից

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1022, գ. 8, գ. 40, թ. 1:
[2] ՀԱԱ, ֆ 1022, գ. 8, գ. 42, թ. 1:
[3] Տես Нагорный Карабах в 1918-1923гг, стр. 470:
[4] Ա.Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը 1920-21թթ., էջ 78-79:
[5] Տես ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 427, մաս I, թ. 33:

դժգոհության մեծ ալիք է առաջացնում, և այդ մասին իր բողոքն է արտահայտում Մելիք-Յոլչյանը: Նա Դրոյի հապշտապ և խորհրդավոր հեռացումը համարում է հանրապետության քաղաքականության ձախողումը. «Դրոն անձամբ իշխանությունը հանձնում է տեղի բոլշևիկներին Դրոյի ջոկատի Ղարաբաղից հեռացումը Զանգեզուրում ստեղծում է որոշակի խուճապային իրավիճակ: Հուզումներ են առաջանում ժողովրդի մեջ»[1]:

Ղարաբաղի հայության ճակատագրում կարևոր իրադարձություն էր 10-րդ համագումարը, որը կայացավ մայիսի 28-ին Թաղավարդ գյուղում: Այն երկրամասը հռչակեց խորհրդային և ստեղծեց հեղկոմ՝ Սաքո Համբարձումյանի նախագահությամբ: Հունիսի 16-ին Լեռնային Ղարաբաղի և Դաշտային Ղարաբաղի հեղկոմները միավորվեցին, իսկ կենտրոնը դարձավ Շուշի քաղաքը:

Այսպիսով, Ղարաբաղի խորհրդայնացմամբ ավարտվեց երկրամասի գոյապայքարի մի ողջ ժամանակաշրջան: Այն կարելի է բնութագրել մի շարք ընդհանրացնող գծերով, որ բրիտանական զորքերը դուրս են բերվում, ինչի արդյունքում երկրամասը մնում է լիովին անպաշտպան: 1919թ. նոյեմբերի 29-ի Կ. Պոլսի թուրք-մուսավաթական համաձայնագրի նպատակներից էր հայ բնակչության և մասնավորապես՝ Ղարաբաղի հայության ֆիզիկական բնաջնջումը: Թուրք-մուսավաթական ռազմական գործողությունների կիրառումը ուղղված էր Ղարաբաղի հայության հնազանդեցմանը: 1919թ. սկզբից իրականացվում են Ղարաբաղի հայության կոտորածները: Հիմնովին կոտորվում է Շուշու հայ բնակչությունը: Խորհրդա-քեմալական համագործակցությունը հանգեցնում է Ղարաբաղի խորհրդայնացմանը 1920թ. մայիսին:

[1] ՀԱԱ, ֆ. 1022, գ. 8, գ. 51, թ. 1: